

ՆՅՈՒԹԵՐ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

III

Հունաստանում լույս տեսնող բազմաթիվ պարբերական հրատարակություններում (տեղեկագրեր, տարեգրքեր, հայրենակցական միությունների գիտական ժողովածուներ) լույս են տեսել բազմաթիվ գիտական հոգովածներ, որոնցում կարելի է արժեքավոր տեղեկությունների հանդիպել Փոքր Ասիայի, Թրակիայի, Մակեդոնիայի, Բեսալիայի, Էվբիա, Կրետե և Կիպրոս կղզիների հայկական գաղութների վերաբերյալ: Դրանցում մեծ արժեք են ներկայացնում հիշյալ շրջանների առանձին քաղաքներում և գյուղերում հայերի կազմած թվի մասին վիճակագրական տվյալները, ապա նաև նրանց զբաղմունքի մասին տեղեկությունները: Նկատի առնելով հայագետների համար այդ պարբերականների անմատչելի լինելը, ստորև վերաշարադրմամբ կամ քաղվածաբար բերվում են հայերին վերաբերող այդ տեղեկությունները, որոնք, անտարակույս, կարևոր են Փոքր Ասիայի և Հունաստանի հայկական գաղութների պատմության ուսումնասիրության համար:

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Μέλπας Δογοθέτης-Μερλιέ, Οι 'Ελληνικες κοινότητες στη σύγχρονη Καππαδοκία, Δελτίο Κέντρου Μικρασιατικών Σπουδών, τόμος 1-ος, 'Αθήνα 1977, σελ. 29-74:

Մելպո Լոգոթեթի-Մերլիե, Ժամանակակից Կապադովկիայի հունական համայնքները: «Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի Տեղեկագիր» հտ. 1-ին, Աթենք, 1977, էջ 29—74:

Հեղինակն իմիջիայլոց խոսում է նաև էվբեեկի մասին, որ Գեվեկի կայմակամության նստավայրն էր: Փոքր քաղաք էր՝ 10.000 բնակիչներով: Մերլիեն հիշում է Ա. Լևիդիսի 1897 թ. գրած մի անտիպ գործ և բնակչության հիշյալ թվական տվյալները վերցնում այնտեղից: Նա միաժամանակ հիշում է Սինասոսի մասին մի այլ հեղինակի՝ Արքեիլյոսի, 1899 թ. գրած աշխատությունը, որի համաձայն բնակիչներից 4.000-ը թուրք էին, 4.000-ը՝ հայ և 1.000-ը հույն: Հոգվածագրի ասելով, հույները 125 ընտանիք էին և բնակվում էին էվբեեկի սուրբ Կոստանդինոս թաղում: Բնակչության կազմը, գրում է նա, փոխվեց, քանզի ինչպես իրեն ասել են Ֆարաշի բնակիչները, այդ շրջանի հայերին 1895, 1908 և 1914—1918 թթ. թուրքերը ոչնչացրին (էջ 64):

Լոգոթեթի-Մերլիեն էվբեեկի շրջանում հիշում է նաև երկու գյուղ՝ Զելան և Գարաձորները: Զելան գտնվում է էվբեեկից 2 ժամ ճանապարհ դեպի հարավ, իսկ Գարաձորները՝ 3 ժամ հարավ-արևմուտք: Զելան ունի 70 քրիստոնյա և 450 թուրք ընտանիք բնակչություն, իսկ Գարաձորները՝ 45 հույն և 50 հայ ընտանիք (էջ 65):

Δ γ μ. Μάνου, 'Η 'Ελληνική στη Μικρασία παρουσία. „Μικρασιατικά Χρονικά,, τόμος 12-ος, 'Αθήναι, 1965, σελ. 145—172.

Դիմ. Պ. Մանոս, Հույների առկայությունը Փոքր Ասիայում: «Փոքրասիական Տարեգիրք», հտ. 12-րդ, Աթենք, 1965, էջ 145—172:

Հեղինակը բերում է Քյոթահիայի մասին 1921—1922 թթ. վերաբերող գեոգրաֆիկ տեղեկություններ, որոնց համաձայն քաղաքն ուներ 32.000 բնակիչ (ըստ նրա բերած այլ տվյալների՝ 50.000), որոնցից 3.000-ը հայեր էին, իսկ 5.000-ը՝ հույներ: Մանոսը հրատարակել է Քյոթա-հիայի Թանգարանում պահվող տարբեր ժամանակների հունարեն արձանագրություններով տա-

սլանաքարեր, այդ թվում և մեկ հայերեն: Վերջինիս լեզվին անտեղյակ լինելով, նա տվել է դրա դժագիրը, որի սխալներն ուղղելով, կարելի է կարդալ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏՆԵՒ ԾՂՆԾԻ ԱՐԱՀԱՄԻ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍ ԷՐԵՑԻ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ԹՎ. ՌՄՀԴ (1825 թ.):

Κωνστ. Μακρῆ, 'Η Κυζικηνῆ χειρσόντησος. 'Η παροῦσα κατ'ατάσας τῆς. 'Μικρασιατικῆ Χρονικῆς, τόμος 6-ος, 'Αθήναι, 1955, σελ. 149-188.

Կոստ. Ս. Մակրիս, *Կյուզիկոսի թերակղզին: Նրա ներկա վիճակը: Բնագրասիրական Տարեգիրք», հտ. 6-րդ, Աթենք, 1955, էջ 149—188:*

Ներկա վիճակն ասելով նկատի ունի 20-րդ դարի սկիզբը, քանզի հողածագիրը վախճանվել է դեռ 1920 թ. և հողածք տպվել է նրա մահից հետո: Կյուզիկոսի թերակղզի ասելով նկատի ունի Մարմարայի ծովի հարավային ափերից սկսվող թերակղզին: Հնում և բյուզանդական շրջանում այստեղ կար նշանավոր Կյուզիկոս քաղաքը: Այժմ հայտնի քաղաքներից է Օրդակը (հնում՝ Արտակ), Բանդերման (հնում՝ Պանորմոս) և այլն:

Հողվածում իմիջիպեսը գրված է. «Կյուզիկոսի թերակղզին ունի 14 ծովափնյա, այդ թվում և Արտակեն, և 3 երկրամիջյան գյուղեր: Արևելյան ափին գտնվում են Մեխանիոնա, Պերամոս, Արմենոսթրի¹ և Նեոխորի² գյուղերը... Բոլոր գյուղերի ընդհանուր բնակչությունն այժմ 20.700 հոյն է, 2510 բուրբ, 1000 հայ և 500 չերքեզ: Շատ փոքր թիվ են կազմում հրեաները, կան և մի քանի ալբանացիներ: Արմենոսթրին ամբողջությամբ հայերով է բնակեցված, իսկ մնացածներն ամբողջությամբ հույներով (էջ 149):

Κωνστ. Μακρῆ, Τὰ χωρία καὶ τὰ μοναστήρια τῆς Κυζικηνῆς χειρσόντησος, 'Μικρασιατικῆ Χρονικῆς, τόμος 8-ος, 'Αθήνα 1959, σελ. 129-172.

Կոստ. Ս. Մակրիս, *Կյուզիկոսի թերակղզու գյուղերն ու վանքերը: Բնագրասիրական Տարեգիրք», հտ. 8-րդ, Աթենք, 1959, էջ 129—172:*

Հեղինակն ի թիվս այլոց հատուկ կանգ է առնում նաև Արմենոսթրիի (աշակական գյուղի) վրա: Նա գրում է. «Պերամոս գյուղից երկու ժամ ճանապարհ հեռավորության վրա դեպի հարավ-արևմուտք գտնվում է Արմենոսթրին, որ ամբողջությամբ հայերով է բնակեցված: Նրանք այստեղ են գաղթել Հայաստանից՝ շուրջ 1720 թ.: Ունի 200 ընտանիք, այսինքն շուրջ 1000 բնակիչ, շատ աշխատասեր, որոնք զբաղվում են իրենց դաշտերի մշակմամբ, շերամարուծությամբ և գյուղի մոտակայքում գտնվող քարհանքերից դրանիտ կտրելով: Այդ դրանիտից նրանք տարեկան մեծ քանակությամբ խորանարդներ են արտահանում Գոստանդեուպոլիս: Գյուղն ունի շատ լավ շուր, որ բխում է դրանիտի ժայռերից և օրական մեծ քանակությամբ շուր է փոխադրվում դիմացը գտնվող Պանորմոս և օգտագործվում որպես խմելու շուր:

Բնակիչներն արվեստասեր են և առաջադիմող, ունեն շատ գեղեցիկ եկեղեցի, պահում են ևրկու դպրոց՝ արական և իգական» (էջ 162—163):

Հողվածագրի որդին՝ Հիպոկրատիս Մակրիսը իր ծանոթագրության մեջ հիշում է մի փաստաթուղթ, որի համաձայն Արմենոսթրին անցյալ դարի սկզբին ուներ 60 հայ ընտանիք բնակչություն, շուրջ 300 հոգի, և եզրակացնում, որ այդ ընթացքում բնակչության թիվը հոսպատակվեց:

¹ Հեղինակը գյուղերի անունները հունացնում է: Թուրքերենում Արմենոսթրին էրմենիթյոյ է:

² Նեոխորին թուրքերենում ներքյոյ է:

Ιπποκράτης Κ. Μακρής, Οι κάτοικοι της Κυζικηνής γερσονήσου. „Μικρασιατικά Χρονικά“, τόμος 9-ος, 'Αθήναι 1961, σελ. 211-226.

Հիպպոկրատիս Կ. Մակրիս, Կյուզիկոսի թերակղզու բնակիչները: «Փոքրասիական Տարեգիրք», հա. 9-րդ, Աթենք, 1961, էջ 211—226:

Հոգվածագիրը Կոստ. Ս. Մակրիսի որդին է: Նա իմիջիպետ խոսում է նաև մեզ արդեն հայտնի Արմենոսների մասին: «...Արմենոսներին,— գրում է նա,— զուտ հայկական դուռ է: լուսավորական հայերով բնակեցված, և տեղական ավանդության համաձայն հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին (1720 թ.)»: Լ. Մակրիսը հիշում է 17 դուռ, որոնցից Արմենոսներին 15-րդն է: Նա տալիս է դուռի հունական անվանումը՝ Արմենոսների, թուրքականը՝ էրմենիքյու: Նա հիշում է, որ 1500 թ. Կյուզիկոսում կատարված մարդահամարի տվյալներով Արմենոսներին ուներ 1000 հայ բնակիչ: 1922-ին, գրում է նա, հայերը ևս լքեցին իրենց դուռը և հետևեցին իրենց հարևան հունական դուռերի բնակչությանը: Թուրքական կառավարությունը հետագայում այստեղ թուրքեր բնակեցրեց, դուռի անունը փոխելով և կոչելով այն Քաթլը սու (Անուշ շուր), (էջ 212—215, 226):

Έμπρ. Δ. Δεμιρζάκη, Βιομηχανική παραγωγή Νομού 'Αιθιοπίας. Σανταλκία. Συμπύκτης—'Αιθιοπίας—Δενιζλί—Μεντεσέ και περσιόχης Κυδονιών. „Μικρασιατικά Χρονικά“, τόμος 12-ος, 'Αθήναι, 1965, σελ. 11-52.

Էմմ. Դ. Դեմիրզակիս, Այդինի նահանգի արդյունաբերական արտադրանքը: Զմյուռնիա-Այդին-Դենիզլի-Մենթեշի սանջակների և Կիզոնի (իմա Ալվալը—Ն. Բ.) շրջանի: «Փոքրասիական Տարեգիրք», հա. 12-րդ, Աթենք, 1965, էջ 11—52:

Տվյալները վերաբերում են 20-րդ դարի առաջին տասնամյակներին:

«Գործարանների և արհեստանոցների տերերի ու արդյունաբերողների ազգային պատկանելությունը»:

Հիմնարկությունների թիվը

բանկերների թիվը

հունական —	4.008	28.166
թուրքական —	1.216	5.766
հայկական —	28	363
հրեական —	21	229
անգլիական —	13	1.489
ֆրանսիական —	8	143
ավստրիական —	6	101
իտալական —	3	75
ամերիկյան —	2	290
գերմանական —	2	35
բելգիական —	1	528

(էջ 15)

Վերահիշյալ հոգվածի շարունակությունը լույս է տեսել նույն «Տարեգրքի» 13-րդ հատորում: Աթենք, 1967, էջ 9—50: Այստեղ հոգվածագիրը Զմյուռնիայի գորգագործական խոշոր մի տան իրեն տրված ցուցակի հիման վրա գրում է արևելյան կաշվեղ գորգերի հիմնական տեսակների մասին: Նա իմիջիպետ ցույց է տալիս, որ «Հայաստանի Սեբաստիայի և Մարաշի» շրջանում արտադրվում էր երկու տեսակի գորգ, «Հայաստանի Ուտֆայի շրջանում»՝ տարբեր տեսակի, իսկ «Հայաստանի Խարբեն» շրջանում մեկ տեսակի գորգ: Հայերից Զմյուռնիայում գորգերի առևտրով զբաղվում էին էքիզլեք և Իսֆենջյան առևտրական տները: Այնուհետև հոգվածագիրը կանգ է առնում 1908 թ. ստեղծված Oriental Carpet C^o-ի Թուրքիայի տարբեր քաղաքներում ունեցած:

գորգագործական դազգահների խանակի և նրանց վրա աշխատող բանվորների թվի ու ազգային պատկանելության հարցի վրա: Նա ցույց է տալիս, որ հիշյալ ընկերությունը Գյուրգեսում ուներ 600 դազգահ՝ 2400 բանվորների (հայուհիներ՝ 11½ %-ը), Սերաստիայում՝ 120 դազգահ՝ 600 բանվորների (80 %-ը հայուհիներ), Պիոդիայի Սպարտայում և շրջակայքում 200 դազգահ՝ 800 բանվորների (20 %-ը հայուհիներ), Վուրդուրի շրջանում 100 դազգահ՝ 500 բանվորների (75 %-ը հայուհիներ), Մարաշի շրջանում 140 դազգահ՝ 700 բանվորների (100 %-ը հայուհիներ)³, Հանքում 80 դազգահ՝ 350 բանվորների (100 %-ը հայուհիներ):

Դեմիրզակիսն այնուհետև խոսում է Զմյուռնիայի քաղաքների մասին: Զմյուռնիայում կային հույներին պատկանող ութ արհեստանոցներ և հայերին պատկանող շուրս այլ քաղաքներ: Հայերից նա հիշում է Հակոբ Մանուկյանին, որն աշխատեցնում էր 20 բանվոր, Ի. Խաչատրյանին՝ 19 բանվոր, Հովհ. Քիրմաշյանին՝ 10 բանվոր և Խ. Բակլավաշյանին՝ 10 բանվոր: Տոկոսային հարարերում քաղաքներում աշխատող բանվորների 80 %-ը հույներ էին, 10 %-ը՝ լուրեր և 10 %-ը՝ հայեր:

Nixou Βεροπουλου, Ξερριζωμα—Ξαναζωντανεμα. „Μικρασιατικα Χρονικά“, τόμος 10-ος. 'Αθήναι, 1963, σελ. 293-333.

Նիկոս Վերոպուլոս, Արմատահանում — վերակենդանացում: «Փոքրասիական տարեգիրք», հա. 10-րդ, Աթենք, 1963, էջ 293—333: Մասն Ա. Փոքր Ասիայի հույների նպաստը Թուրքիայում: Զմյուռնիայի վերջին առևտրականները:

Հեղինակը խոսում է Զմյուռնիայի հույն վաճառականների և նրանց դերի մասին, բայց և միաժամանակ արժեքավոր տեղեկություններ է տալիս քաղաքի հայ վաճառականների մասին: Հասկանալի է, որ տվյալները վերաբերում են 1922 թ. անմիջապես նախորդող ժամանակաշրջանին: Կերպասեղենի, կանանց և տղամարդկանց նորաձևությունների առևտրով զբաղվողների մեջ հիշվում են Ավետիքյան եղբայրները, Բաբրջյան եղբայրները, «Փափազյան և Հեկերությունը», Եսայան և Փիրզալիմյան-Իփրիկյան վաճառականները: Մետաքսեղենի առևտրով զբաղվում էին Լ. Սիմոնյանն ու Օ. Անգալյանը:

Վերոպուլոսը հատուկ խոսում է Զմյուռնիայի և շրջանի սպառած նավթի մասին: Այն տարեկան կազմում էր 18.000 տոննա, որ ներմուծում էին երեք ընկերություններ (Standard Oil Company-ն ներմուծում էր Ամերիկայից և Ռումինիայից, Ավետիքյան ընկերությունը՝ միայն Ռումինիայից, Եսայան և այլ փոքր ներմուծողներ՝ Ռումինիայից և Ռուսաստանից: Տոկոսային հարարերում Standard Oil-ի ներմուծածը կազմում էր 75 %, Ավետիքյանին՝ 20 %, Եսայանին ու մնացածներին՝ 5 %)⁴:

Ոսկերիներից Վերոպուլոսը հիշում է Ա. Ունչյանին, կերպասի վաճառականներից ու դերձակներից՝ Օհանյանին, Ա. Փափազյանին, կերպասեղենի բորսայի միջնորդներից՝ Հովհաննեսյանին, Մ. Վեմյանին, Կ. Բալաբանյանին:

Այնուհետև հողվածագիրը մանրամասն խոսում է Զմյուռնիայում թղի արտահանության վերաբերյալ Ա. Համբարձումյանի մասին: Նա գրում է. «Թուղ արտահանող Արամ Համբարձումյանը, մի շատ առաջադիմող մարդ, գործը դրել էր գիտական հիմքի վրա: Նրա բանվորները, կատարյալ մաքուր, ձյանասպիտակ բլուզներով, թուղը մշակում էին ծովի ջրով, որ հատուկ բերում էին բերդից, քանզի Զմյուռնիայի ծովածոցի ջուրը, ինչպես բոլոր նավահանգիստների, մաքուր չէր: Թուղերը ցելոֆանով զննելիս փաթեթավորված, կրում էին Արամի փոքր նկարը: Ամերիկացի փոխշուկատուներ, որ հետևում էր Ամերիկա արտահանող թղի պատրաստման աշխատանքներին,

³ Դեմիրզակիսը այս հայուհիներին բողոքական է համարում, բայց նա հազիվ թե հիշալիս է:

⁴ Հողվածագիրն իր ծանոթության մեջ նշում է, որ «այս թղիները հիշտ են, քանզի ստացել է իր բլիկը Բևեփ. Վանելիսից, որն այն ժամանակ Զմյուռնիայի Standard Oil Company — Բ. Բարձրաստիճան ծառայող էր և սպառման բաժնի տնօրենը»:

արտակարգ գոհ էր՝ Արամից՝ թզի մաքրության համար։ Արամ մականիշի թուզն Ամերիկայում և այլ երկրներում նախապատվություն ուներ և լավ գին։ Արամին էին ուզում նմանվել և այլ արտահանողներ, կրեկակոխ։ Նրան հետևում էր թուզ արտահանող Մենելաս Վալձիսը։

Զմյուռնիայի աղետից հետո թուրքերը Արամին ձեռք չտվեցին և նրա մասին հոգ տարան, որպեսզի իրենց սովորեցնի թզի մշակման իր սխեման։

Բացի Արամ Համբարձումյանից, Վերոպոլսը հանվան հիշատակում է թուզ արտահանող այլ հայերի և՛ էլմասյան Եղբայրներին և Օ. Հալեպլյանին (էջ 303—304, 307—309, 314, 316)։

Ղ. Գ. Γαϊτάνου Γεαννιοῦ, 'Απο τὴν Ἀνατολικὴν Θράκην. 'Η επαρχία Δερκων. „Θρακικά“, τόμος 12-ος, 'Αθήναι, 1939, σελ. 160-209.

Աթ. Գալտանոս Գաննիու, Արևելյան Թրակիայից։ Դերկոն նահանգը։ «Թրակականք», հա. 12-րդ, Աթենք, 1939, էջ 160—209։

Դերկոնը հին քաղաք է և նահանգ՝ Արևելյան Թրակիայում։ Քաղաքը գտնվում է Կոստանդնուպոլսից 32 կմ հյուսիս-արևմուտք, ծովափից 2 կմ հեռու։ Խնդրո առարկա նահանգում գտնվում է հայտնի Սան Ստեֆանոն, որտեղ 1878 թ. կնքվեց պայմանագիր։ Հողվածագիրն ունի առանձին վերնագիր՝ «Սբ. Ստեֆանոս» որի մասին գրում է. գյուղի հին եկեղեցին կիսանկուղային էր և կիսավեր։ դրա համար 1844 թ. քանդվեց և 1845 թ. ի հիմանք վերականգնվեց մեծահարուստ և բարձրօրոշման Պողոս Տատյանի ծախսով։ Պողոս Տատյանի մասին պատմում են նրա որդիներ Արթինը, Հակոբն ու Առաքելը, ինչպես և նրանց ֆրանսերեն լեզվի քաղաքիտակ քույրը՝ գեղեցկուհի Նեկտարը։ Նրանք պատմում են, որ իրենց հայրն իր հարստությամբ պարտական է մի կողմից պետական մրցույթում իր ունեցած հաղորդությանը, երբ նախապատվությունը տրվեց իր մշակած վառողին, որով նա Մաքրիքոյի վառողի գործարանի տնօրեն նշանակվեց, մյուս կողմից՝ սուլթան Մեշիդի բանաստեղծական ոգուն։ Հողվածագրի ասելով, Թուրքիայի այս առաջադիմական բարենորոգիչը, մի առթիվ այցելության գնաց Պողոս էֆենդի Տատյան բարոտյիբալիին Սուրբ Ստեֆանո նրա մաքմարաչեն դղյակը, որ գտնվում էր ոստիկանական բաժանմունքի շենքի ետևում, բարձրացավ նրա բնակարանը և իր հայացքի առաջ բացվող թրակական դաշտի աննկարագրելի գեղեցկությամբ հիացած, կանչեց տանտիրոջը և ասաց. «Պողոս, հայացքդ ինչքան կարող է ընդգրկել։ Պողոսը չկարողացավ որոշել, հորիզոնն անսահման էր։ Այն ժամանակ սուլթանն ասաց. «Այսպես, ինչքան ընդգրկեց, ամենը քոնն է։ Այդ օրվանից, իրոք, Տատյանն ու նրա որդիները բարեբեր և ձիարուծությամբ հռչակված Թրակիայի 19-րդ դարի խոշորագույն կալվածատերերն էին (էջ 176—177)։

Հողվածագիրն այնուհետև գրում է, որ 1935 թ. հոկտեմբերի 20-ի մարդահամարի տվյալներով Սան Ստեֆանոն ունի 130 տուն ուղղափառ (իմա հույն) բնակչություն, 100 տուն հայ, 100 կաթոլիկ և միայն 30 տուն թուրք, բայց վերջիններիս թիվը գնալով աճում է։ Հին բնակիչները մեծամասամբ գաղթեցին Հունաստան (էջ 180)։

Հողվածի 194-րդ էջում խոսվում է նույն նահանգի հյուսիս-արևմտյան մասում գտնվող էրմենիքոյի («Հայկական գյուղի») մասին։ Ունեն 80 ընտանիք ուղղափառ (հույն) բնակչություն, որոնք Երկրագործությամբ էին զբաղվում։ Ավելի հին ժամանակներում հայերը թվական առումով զերազանցում էին, այստեղից էլ ահա գյուղի «Հայկական» անունը։

Դ. Ա. Αμπουσιάδου, 'Οβιοπορικόν. „Θρακικά“, τόμος 15-ος, 'Αθήναι, 1941, σελ. 98-134.

Գ. Լամպուսիդիս, Հանապարհորդական նոթեր։ «Թրակականք», հա. 15-րդ, Աթենք, 1941, էջ 98—134։

Առանձին վերնագրի տակ խոսվում է Տիրուեի (Չոուլուի) մասին, Կոստանդնուպոլսից Ադրիանուպոլիս նահապարհի վրա՝ Արևելյան Թրակիայում։ Հողվածագիրը կանգ է առնում քաղաքի տարբեր տեղերում հանքիպող հնագիտական նյութերի վրա և այդ առթիվ հիշատակում է «Հայկական եկեղեցու բակը»։ Նա ցույց է տալիս, որ հայերն անցյալում ունեին 700 տուն, այժմ (համարաբար մինչև բնակչությունների փոխանակումը առաջին համաշխարհային

պատերազմից հետո— Ղ. Բ.) 150-ից պակաս: Նա հիշում է նաև «Հայկական շուկան», ինչպես և հայոց Սուրբ Դեորգ եկեղեցին, որը, նրա ասելով, կառուցվել է 1550 թ.: Եկեղեցու ներքին պատերը երեսպատված են Թորատի հախճապակով: Հայերն այստեղ եկան, գրում է Լամպուսիա-դիսը, Սուլեյման օրենսդրի ժամանակ, կառուցելու համար այդ քաղաքում սուլթանի մզկիթը: Իկեղեցու բակում պահպանվել են վիճադիր արձանագրություններով բազմաթիվ տապանաքարեր՝ բերված հայկական գերեզմանատներից (էջ 108—110): Շարունակության մեջ հողվածագիրը գրում է Ոռոստոյի (Թեթիրդաղ) մասին և ցույց տալիս, որ առաջին համաշխարհային պատերազմից առաջ այստեղ ապրում էին 12 հազար հայ (այժմ՝ 3600 հոգի, այնքան, ինչքան հույներ), որոնք այստեղ են բերվել փաշայի կողմից որպես հյուաններ՝ մզկիթի կառուցման համար: Հայերն այստեղից գաղթեցին նաև Մալգարա և Չոռլու (էջ 112):

Γ. Κωνσταντινίδου, 'Ολίγα περί 'Αδριανουπόλεως. „Θρακικά“, τόμος 17-ος, 'Αθήναι, 1942, σελ. 292-307.

Գ. Կոստանդինիդիս, Մի քանի խոսք Ադրիանուպոլսի մասին: «Թրակականք», հտ. 17-րդ, Աթենք, 1942, էջ 292—307:

Հողվածագիրը գրում է սուլթան Սելիմի մզկիթի մասին, որ կառուցել է Սինան փաշան, որ ունեց կողմից հավատարմիս հույն է համարվում, իսկ ըստ ուրիշների նա հայ էր: Բերում է տարբեր ավանդություններ մզկիթի կառուցման վերաբերյալ, թե ինչպես Սինանը նախքան մզկիթի կառուցումը սկսելը, հատուկ շինարարների համար զուգարաններ է կառուցել տվել, ինչպես այդ առթիվ իրեն սուլթանի առաջ զրպարտել են, թե մզկիթի վրա նա ինչու է 399 և ոչ թե 1000 լուսամուտ շինել և թե ինչպես նա փայտե թեկեր է շինել և մզկիթի շորս մինարեներից մեկի վրայից ցած թռել և ընկնելով եղբորը կոշիկով բլուրը, սպանվել (էջ 297—299):

Οἱ χονόμοι Χ. Λουίζου, Λαογραφικά συμμικτά Ταιφουρίου--Καλλιπόλεως, „Θρακικά“, τόμος 6-ος, 'Αθήναι 1935, σελ. 319-449.

Խ. Լ. Իկոնոմու, Տայֆուր-Կալլիպոլսի ազգագրական խառը նյութեր: «Թրակականք», Աթենքի «Թրակական Կենտրոնի» պարբերական հանդես, հտ. 6-րդ, Աթենք, 1935, էջ 319—449:

Խոսքը վերաբերում է այժմ Թուրքիայի սահմաններում՝ Ադրիանուպոլսի նահանգում գտնվող Կալլիպոլիս (Գելիրոլու) թերակղզուն, որ ձգվում է Գարդանեղի արևմտյան ափերով: Հողվածագիրը տալիս է տվյալներ նրա բնակչության մասին, ընդ որում բացի հույներից, այստեղ ապրում էին նաև թուրքեր (2000 ընտանիք), հրեաներ (500 ընտանիք) և 250 հայ ընտանիքներ (էջ 336): Տվյալները վերաբերում են մինչև 1923 թ. բնակչությունների փոխանակությունն ընկած շրջանին:

Β. Δεληγιάννη, 'Ιστορικά σημειώματα καὶ παραδόσεις. 'Αρχαίον τοῦ Θρακικοῦ λαογραφικοῦ καὶ γλωσσικοῦ θησαυροῦ, τόμος 2-ος, 'Αθήναι, 1935-1936.

Վ. Դելիյանեհիս, Պատմական նոթեր և ավանդույթներ: «Թրակական Ազգագրական և Լեզվական Գանձարանի դիվան», եռամսյա պարբերական հանդես, հտ. 2-րդ, Աթենք, 1935—1936:

Հեղինակը, որ ուսուցիչ էր, բնակչությունների փոխանակությունից հետո Հունաստան հաստատված մալգարացիներից հավաքել է ազգագրական բնույթի արժեքավոր նյութեր, որոնց թվում է 81 տարեկան մի ծերունուց՝ Անագնոստիս Բուտրակիսից, գրառել է տեղեկություններ Մալգարայում հաստատված հայերի և Ղրիմի թաթարների մասին: Մալգարան Ադրիանուպոլսից,

հարավ և Ռոգոստոյից արևմուտք գտնվող գյուղաքաղաք է, այժմ Թուրքիայի սահմաններում գտնվող Արևելյան Թրակիայում: Ծերունին իր գյուղի բարրառով պատմել է հետևյալը.

ա) «Շատ վաղուց լէ, որ հայերն եկան Մալգարա: Ինչպես իմ հայրն է պատմում, ինքը 12 տարեկան էր, երբ նրանք եկան: Հայրս մեռավ 1900 թ. 87 տարեկան հասակում: Գրիշ վերցրու և հաշվիր ևրր եկանք: Նրանք մուհաշիրներ (գաղթականներ) էին՝ վանից, շուրշ քսան ընտանիք: Ուրիշներ էլ կային, որ Ռոգոստո գնացին: Նրանք սմեն արհեստից հասկանում էին, բան չկար, որ չիմանային: Միայն հող մշակել չգիտեին: Մալգարան այն ժամանակ փոքր քաղաք (ավան) էր, շատ քիչ էսնաֆներ (արհեստավորներ) ունեւր: Ծրր նրանք իմացան, որ հայեր են եկել և ուղում էին քասարայի մեշ հաստատվել, բուրն էլ ոտքի եկան և շուգեցին նրանց ներս թողնել: Մեշլիսներ (ժողովներ) եղան, դուրսվայներ, փատըրգըներ (իրարանցում), և ևռլիները (տեղացիները) թույլ տվեցին նրանց խրճիթներ շինեն գրսում, Մալգարայի դիմաց, կես ժամ հեռավորության վրա: Այդ վայրը մինչև վերջերս կոչում էին «Հայկական խրճիթներ»: Բայց ևրր տարիներն անցում էին և մալգարացիները հասկացան, որ հայերից օգուտ ունեն, թույլ տվեցին նրանց հաստատվել քասարայի մեշ, և դրանից հետո Մալգարան շատ փոխվեց: Բուրր հայերը շորքաշի (հարուստ) դարձան, մինչև որ մեզ հետ այնտեղից հեռացան:

բ) 1860-ին թե 1861-ին Ռուսաստանից եկան և վակուֆներում ու դաշտերում հաստատվեցին ուրիշ միլիթներ (ազգեր) ևս: Նրանց նուգազներ էին անվանում, թաթարներ, ղրիմեցիներ, որոնք իրարից միայն լեզվով էին տարբերվում: Բուրն էլ վայրենի մարդիկ էին՝ մորուքավոր: Գլխին՝ շուրշը ուլխարի սպիտակ մորթուց բարձր փափախներ էին հագնում: Հագնում էին նեղ հագուստներ, կուրտկա՝ մեշքին գոտի, որից դաշույն էր կախված, ինչպես այժմ ղիւմլորներու: Նրանց տոաները, երբ դառնում էին երեք տարեկան, նրանց կրծքին փամփուշտներ էին շարում, իրենք էլ իրենց հանդերձների վրա փամփուշտներ ունեին շարած: Նրանք մնացին 19 տարի, հետո Ռուսաստանը նրանց ընդունեց: Իրենց գնալու պահին, նրանք կողպտեցին, մաքրեցին բուրր քրիստոնեական գյուղերը, բան չթողեցին: Միայն երբ ծովափ հասան, Թուրքական կառավարությունը նրանց ձեռքից ամեն ինչ խլեց և շթողեց իրենց հետ բան տանենք:

Ա. Ա. Տ., 'Αφ'ηγγαις τοῦ ταξιδίου τοῦ Δ.ος 'Ιωάννου Φραγκίσκου Genelli Careri
κατὰ τὸ 1693-1694, „Θρακικά,, τόμος 3 ος, 'Αθήναι, 1932, σελ. 177-180.

Ա. Ա. Մ., Դոկտոր Հովհաննես Ֆրանցիսկոս Genelli Careri-ի 1693—1694 թթ.
ճանապարհորդության նկարագրությունը: «Թրակականք», հտ. 3-րդ, Աթենք,
1932, էջ 177—180:

Ճանապարհորդական նոթերում իմիջիայլոց գրված է. «... Մալգարան լեռան ստորոտին գտնվող մի քաղաք է և ունի շուրշ 10.000 ընակիչ՝ թուրք, հայ և հույն: Գտնվում է փաշայի իրավասության ներքո, որին են ենթարկվում շրջակա շուրշ 300 գյուղեր: Ունի յոթ կապարածածկ մզկիթներ... Armanli-ի և Ուզուն Քյոփրուի վրայով ամսի 22-ին, երեքշաբթի օր հասանք Ադրիանուպոլիս քաղաքը: Այն ընակեցված է հույներով, հրեաներով, հայերով, թուրքերով, վալախներով և այլ ազգություններով: Բնակչության թիվը շուրշ 100 հազար է: Ամսի 23-ին, չորեքշաբթի օր... այցելեցինք հրաշալի շուկան, որի երկարությունը կես մղոն է և կռվում է շուկայի հիմնադրի անունով՝ Ալի փաշա: Շատ ընդարձակ շուկա է, ունի վեց դարպաս և 365 հարուստ խանութներ՝ զանազան ճոխ ապրանքներով լի: Այդ խանութները պատկանում են թուրքերին, հայերին, հրեաներին և Վույներին, որոնք յուրաքանչյուր խանութի համար ամսական հինգ դուռուշ հարկ են վճարում շուկայի հիմնադրի սերունդներին կամ հետագայում խանութները այդ սերունդներից գնած մարդկանց, ինչպես և կեսական դուռուշ Vecerfeli մզկիթին...» (էջ 178—179):

Տ Ուրեմն ծնվել է 1813-ին և եթե հայերի եկած ժամանակ 12 տարեկան էր, հետևաբար հայերը եկան 1825-ին: Այդուհանդերձ դրանից առաջ էլ այստեղ հայեր կային: Տե՛ս հաշորդ նոթը:

Καλ. Χουρμουνζιάδου, Ἑταιρεία Μετρων καὶ Ἀθύνων. Τὸ Πετροχωρι (Τσακίλι). Ἀρχαῖον τοῦ Θρακικοῦ Λαογραφικοῦ καὶ Γλωσσικοῦ Μνησμερίου, τόμος 4-ος, Ἀθήναι, 1937-1938.

Կալլ. Խուրմունջիադյու, Մետրայի և Աթիրայի գավառը: Պետրոխորին (Չակըլը): Թրակական ազգագրական և լեզվական գանձարանի դիման, թրակացիների հանձնաժողովի հրատարակած եռամսյա պարբերական հանդես, հտ. 4-րդ Աթենք, 1937—1938:

Հողվածագիրը գլուղի հիմնադրման մասին ազգագրական նյութեր է քաղել այդ գլուղի նախկին բնակիչներից: 58 տարեկան Ալեք. Գ. Խուրմունջիադյու Չակըլը գլուղի մասին պատմելիս ասում է, որ «Պատապալի բախչալում» մի տապանաքար կար հունարեն հետևյալ արձանագրությամբ. «ΕΝΤΑΥΘΑ ΚΕΙΤΑΙ ΕΥΦΗΜΙΑ ΑΜΑΛΙΑ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΒΑΣΙΛΕΩΣ (սկստ հանգչի Եվփեմիա Ամալիա [գուտտը] հայոց թագավորի»), պատմողի ասելով տապանաքարն ուներ նաև թվական, որն ինքը չի հիշում: Ելնելով արձանագրությունից և նրան մոտիկ գտնվող էրմենիքյոյ ագարակի անունից, ենթադրում է, որ վտյրը Արմենիսոորի («Հայկական գլուղ») պիտի կոչված լինելու Ալ. Խուրմունջիադյու պատմում է, որ էրմենիքյոյ ագարակը պատկանում էր Սոֆիան իւլ անունով մի հայի, ինչպես և Ալեքսան անունով ագարակը: Հողվածագիրն Ալեքսանի առնչությամբ բերում է 87-ամյա Մարիա Իոաննիդուի պատմածը, որի ասելով Ալեքսանի տերը կոչվում էր Հաչի Ներսես, մասնագիտությամբ՝ սառաֆ (լումայափոխ)՝

Սոֆիան իւլը էրմենիքյոյ ագարակը ծախեց մի թուրք ընտանիքի, որը նրա դաշտերը վարձով մշակելու էր տալիս հուլն գլուղացիներին:

Այս ամբողջի մեջ առավել հետաքրքրություն է ներկայացնում, հարկավ, հունարեն արձանագրությունը: Հողվածագիրը բերում է այդ արձանագրության մի այլ հետազոտողի՝ Լամպրոս Վուցասի, ընթերցումը, որ ավելի լրիվ է. «ΕΝΘΑΔΕ ΚΑΤΑΚΕΙΤΑΙ Η ΜΑΚΑΡΙΑ ΑΜΑΛΙΑ Η ΚΑΙ ΕΥΦΗΜΙΑ Η ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΤΕΛΕΥΤΑ ΙΝΑ Ζ΄ ΜΑΙΟΥ Β΄ (սկստ հանգչի երանելի Ամալիան, որ և Եվփեմիա Հայոց: Վախճանվեց ինդիկտիոնի 7-րդ տարում, մայիսի 2-ին)»:

Ինչպես տեսնում ենք, բոլոր ընթերցումներում էլ համընկնում են Ամալիա, Եվփեմիա. Հայաստան (կամ Հայոց) անուններն ու տեղանունները, բայց ոչ ժամանակն է հայտնի, ոչ էլ այդպիսի անունով թագուհի: Որ արձանագրությունը հին է, վկայում է թվականը. ինդիկտիոնով հաշվում լին ոչ նոր շրջանում: Բոլոր դեպքերում փաստը շատ հետաքրքրական է և հետագա պրպտումները հնարավոր է լույս կսփռեն այս առեղծվածի վրա:

Չակըլըի վերաբերյալ կարելի է ավելացնել և հետևյալը: Կ. Խուրմունջիադյու «Թրակական հանդեսի 13-րդ հատորում, Աթենք, 1940 (Κ. Χουρμουνζιάδου. Το Τσακίλι τοῦ Μετρου. Γλωσσάριον, «Θρακικά» τόμος 13ος, Ἀθήναι 1940, σελ. 366) հրատարակել է գլուղի հունարեն բարբառի բառարան. Այնտեղ կա և ἀβανάκις (ἀβανάκισα, ἀβανάκισο) բառը: Հրատարակիչը բերում է այդ բառով դարձվածքներ, ասացվածքներ. «Նա դիբեդուզ (իսկական- Հ. Բ.) ἀβανάκις է: Ինչ ասես, կհավատա»: «Տեսավ, որ ἀβανάκις է, խաբեց»: Խուրմունջիադյու բառը համարում է թուրքերեն և մեկնարանում գլուղահավատ: Այնինչ բառը, անկասկած, հայերեն «ավանակ»-ն է, որ վկայում է, թե հուլների հարեանությամբ հայեր են ապրել և միմյանց հետ շփվել:

6 Ալեքսանի մասին տե՛ս նաև հաջորդ նոթը:

Eustathii Metropolitae Thessalonicensis Opuscula, accedunt Trapezuntinae historiae scriptoris Panaretus et Eugenici, E codicibus MSS. Basileensl, Parisinls, Veneto nunc primum edidit Theophil. Lucas Frider. Tafel, Amsterdam, 1964. XXV. De Thessalonica urbe a Latinis capta Narratio.

Սալոնիկի մետրոպոլիտ Եվստաթիոսի (մեկն է շուրջ 1125 թ., մահացել 1194 թ.) աշխատություններում կա և մի երկ, որը վերաբերում է 1185 թ. նորմանների կողմից Սալոնիկ քաղաքի գրավմանը: Հեղինակը ցույց է տալիս, որ հիշյալ քաղաքում և նրան մոտիկ գտնվող կրանիա և Զեմենիկոս ավաններում գոյություն ունեին հայկական համայնքներ, որոնք, ինչպես Ֆիլիպուպոլսում, հունադավանների հանդեպ բացասաբար էին տրամադրված: Եվստաթիոսի Լրկի § 113-ում խոսվում է քաղաքում բռնկված սովի մասին. «Այստեղ,— գրում է հեղինակը,— պետք է խոսել նաև բնակիչների սննդի մասին, ցույց տալ, որ (հույն) սովյալներն իրենց ազգակիցներից ոչ մի օգնություն չէին ստանում, բանգի բռնություն էլ հավասարապես սովյալ էին: Նատիկներից մի քանիսը միայն իրենց մերձավորներին մի քանի օրոշու էին տալիս, որով կարելի էր մի կերպ քարշ գալ... Եթե որևէ ունեւոր էլ ուզեցնար դրամով մթերք գնել, ավաղ բարբարոսական տմարդություն. նա ոչ միայն արժեքն էր տալիս, այլև մի բան էլ ավելի՝ Սալոնիկին հարևանությամբ կրանիայում և Զեմենիկոսում բնակվող հրեաներին ու ճալերին... մի օղարկիթը թշվառ քաղաքացուն վաճառում էին երեք պղնձե ստատերով, թեև արժեքը հաղիվ մեկ օրոշու էր: § 114. Բայց հայերին հիշելով, սիրտս կրակ ընկավ, մտաբերելով շարականոտ դեռ ի դեմս նրանց մեր վրա ինչպիսի դժբախտություններ բարդեց: Նախքան քաղաքի առումը նրանք դրսում թշնամիների հետ մեկ էին եղել և մեր հանդեպ վատություններ գործելու մեջ լատիններից ավելի մեծ եռանդ էին ցուցաբերում, հարձակումներ, ասպատակություններ գործելով, մերենայությունների դիմելով, թակարդներ լարելով, գաղտնիքները (թշնամուն) բացահայտելով: Իսկ ներսում նրանք ևս (լատինների հետ) մեր վրա տիրություն էին անում, սպառնում, հրամայում, գրկում, ծնծում, խեղդում մթերքների (բարձր գներով): Ափի մեջ տեղավորվող մի հացիկը, որի արժեքը մեկ օրոշու էր, նրանք շատ ավելի թանկ էին վաճառում, և նրանք ևս խեղդում էին մեզ, ինչպես լատինները: Մենք այն ժամանակ սովից կկոտորվեինք, եթե աստված մրգերի առատ բերք չտար... Ասում էին, որ ամենավատարարո ճալերը պղծում էին (մեզ վաճառվող) հացը, բայց այդ հանգամանքը աղքատների համար արգելք չէր գնելու (ներանց) վաճառքի հանածները: Կարիքը թույլ չի տալիս պահպանել ավանդույթները, նրանք ստիպված էին վարվել այնպես, ինչպես նրանց վիճակի ծանրությունն էր թելադրում: Այսպիսի մի համբավ էլ էր տարածվել, թե լատիններն էլ էին մեր ուտելիքը պղծում: Նրանք ձիթայուղի մեջ ճարպ ու ճրագու էին խառնում: որով պատճառ դարձան, որ իսկական քրիստոնյաները խախտեն շրեքշարթի և ուրբաթ օրերի պահերը: Նրանք ջանում էին ոչ միայն մեզ դժբախտացնել ու ստրկացնել, այլև մեր սուրբ հավատքը տակնուվրա անել: Ո՞վ էր ի վիճակի նրանց առաջն առնել...» (էջ 298—299):

N. I. Γεανγόπουλοσ, Θεσσαλικά μελέται. Ἑπετηρίς Ἑταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, τόμος 14-ος, Ἀθήναι, 1938, σελ. 432-442.

Ն. Յաննոպուլոս, Թեսալական հետազոտություններ, «Բյուզանդական հետազոտությունների ընկերության Տարեգիրք», հտ. 14-րդ, Աթենք, 1938, էջ 432—442:

Հոգվածի երրորդ մասը նվիրված է Թեսալիայի լեխինեոն քաղաքին (կամ գյուղին), որը գտնվում է Ալմիրոսի շրջանում, շրջան, որտեղ միջնադարում հայկական գաղութ է եղել: Ն. Յաննոպուլոսը իր հոգվածում հիշում է, որ Աթենքի համալսարանի դասախոս Գ. Սոտիրիոսն, որ տարիներ շարունակ պեղումներ է կատարել Թեսալիայի Թերեոն (Նոր Անքիալոսում): Հունական «Հնագիտական ընկերության» Տեղեկագրում հրատարակել է երկու, իր ասելով, վաղ-

7 Տե՛ս նույն Յաննոպուլոսի մի հոգվածի մեր թարգմանությունը 2002 ԳԱ Վերաբերիչ 1987 թ. № 9-ում, ինչպես և Դիմիտրիասի շրջանի բյուզանդական վանքերին նվիրված նույն հեղինակի հոգվածի մասին մեր նոթը:

բրիտանական տապանազրկելի Հիշյալ տեղեկագրի 1935 թ. համարում (էջ 64) նա ցույց է տալիս, որ տապանաքարերից մեկը պատկանում էր ոմն ΣΑΝΒΑΤΙΣ-ի: Կասկած չի կարող լինել, որ խոսքը հայկական Սմբատ անվան է վերաբերում, բերված հենց հայկական և ոչ հունական՝ ΣΥΜΒΑΤΗΣ՝ ձևով: Դժբախտաբար ձեռքի տակ չունենալով Գ. Սոտիրիուի հրապարակումը, հնարավոր չէ ալլ մանրամասնություններ տալ այս Սմբատի մասին:

Տպ. Λάμπρος, Συμμετά. Τὰ Ἀρμενα τῆς Εὐβοίας, Νέος Ἑλληνομνημῶν τῶμος 5-ος 1908, σελ. 488-489.

Սպ. Լամպրոս, էվբիայի Արմենյան: «Նեոս էլլինոմնիմոն» հանդես, հտ. 5-րդ, Աթենք, 1908, էջ 488—489:

Այս հոդվածը, ինչպես և դրան հաջորդողը, վկայում են, որ Հունաստանի էվբիա կղզում, ըստ՝ Լերույթին, միջին դարերում եղել է հայկական համայնք, որի մասին է խոսում կղզու մի տեղանուն: Այդ փաստը կարելի է հաստատել և նրանով, որ էվբիայից ոչ հեռու, մայր ցամաքում, Թեսալիայի Ալմիրոս և Դիմիտրիաս վայրերում հայոց գոյությունն այդ ժամանակաշրջանում անստորկելի է: Նշենք այստեղ նաև, որ 1414 թ. մի փաստաթուղթ վկայում է, որ Տրապիզոնից և Սերաստիայից բազմաթիվ հայ ընտանիքներ դիմել են Վենետիկի հանրապետությանը՝ թուլլովություն ստանալու հաստատվելու նրա տիրապետության տակ գտնվող վայրում: Հայերն վենետիկցիների կողմից առաջարկվեցին Կրետեն կամ էվբիան (նեգրոպոնտ): Տե՛ս ՀՄՍՀ ԳԱ Լրագրեր, 1982 թ., № 8, էջ 96—97): Բացառված չէ, որ այդ հայերն իսկապես հաստատվեցին էվբիա կղզում և հիշյալ տեղանունը կապված է նրանց գոյության հետ այնտեղ: Սպիրիդոն էամպրոսը գրում է.

«Էվբիայի Արմենյան: Վենետիկցի ժամանակագիր Մարինոս Սանուտոսը „Istoria del Regno di Romania“ -ում հրատարակված Hopf -ի Chroniques Greco-Romanes գրքում, էջ 126, միջնադարյան էվբիայի մասին խոսելիս, գյուղերի թվում հիշատակում է նաև Armena-ն, որ ֆրանսիական միջնադարյան աղբյուրներում հանդիպում է և Larmena ձևով: Այս գյուղի մասին գրել է և Mas Latrie -ն (Les seigneurs terclers de Negropont, Revue de l'Orient Latin հտ. Ա, էջ 413): Կարիստոսի դասությանը, — գրում է Լատրին, — հաճախ կցվել է և Larmena-ն, կամ L'Armeni-ն, որի ճշգրիտ տեղագրությունը հայտնի չէ: Իմ կարծիքով պետք է տեղադրել գնդապետ Lapie-ի քարտեզում նշված Արմենա տեղում՝ Կարիստոսի հյուսիս-արևմուտքում, Մարաթոնի դաշտի գրեթե դիմացը. թեև Dapper-ի քարտեզում նշված է Armonia վայրը կղզու հակառակ կողմում, Կարիստոսի արևելյան մասում: Ֆրանսիական շտաբի քարտեզում Larmena-յին մոտիկ հնչող որևէ տեղանվան չգոյությունը ցույց է տալիս, որ այդ անունով գյուղի կամ բերդի որևէ մնացորդ առկա չէ»:

Սպ. Լամպրոսը համաձայն չէ վերահիշյալ կարծիքին և ցույց է տալիս, որ դեռևս Տասսոս Եբրուցոսը (Τάσσος Νερούτσος, Χριστιανικά Ἀθῆναι, Δελτίον Ἱστορικῆς καὶ Ἑθνολογικῆς Ἑταιρείας, հտ. 4 — րդ, էջ 143) Larmena-ն նույնացրեց Ստիրոնի և Կարիստոսի միջև գտնվող Արմենա վայրի հետ: Հոդվածագիրը ճիշտ է համարում այդ նույնացումը, տեղացի բնակիչներից իմանալով, որ Ստիրոնից հյուսիս-արևելք գտնվող գաղթափ մի լեռան գագաթը կոչվում է Արմենա:

Յ. I. Σκουρα, Ὁχρῶναις στὴν Εὐβοία (μερικὲς λύσεις στὰ τοπογραφικὰ τοὺς προβλήματα), Ἀρχεῖον Εὐβοικῶν Μελετῶν, τόμος 20-ος, Ἀθῆναι, 1975, σελ. 327-400.

Թ. Ի. Սկուրաս, էվբիայի ամրոցները (նրանց տեղագրության վերաբերյալ հարցերի մի քանի լուծում): «Էվբիական հետազոտությունների դիվան», հտ. 20-րդ, Աթենք, 1975, էջ 327—400:

Հոդվածագիրը մասնավորապես խոսում է էվբիա կղզու Ստիրա շրջանի բերդերի մասին և հատուկ կանգ է առնում Ἀρμενον — Ἀρχαῶν — Armeno — Armena — Larmena — Armenia անուններով հայտնի մի բերդի վրա: Նա գրում է. «Ստիրայից վերև, Դիակոֆտի վայրում, որ

այժմ բնակիչները անվանում են Այ-Նիկոլա (սուրբ Նիկոլայոս), ծովի մակերևույթից 450 մետր բարձրության վրա գտնվում է 'Αρχαῖον կամ 'Αρχαῖον բերդը: Տեղագրության հարց չկա, թանգի բուլբըն էլ հին ժամանակներից մինչև այժմ նրան նույն անունն են տալիս և նույն վայրում տեղադրում: Բերդի շինարարությունը վերաբերում է առեվազն երկու շրջանի: Տեղեկությունները վկայում են, որ Արմենոն բերդը այդպես էր կոչվում հին ժամանակներից մինչև Թուրքական տիրապետության շրջանը: Հզոր պարիսպների շարքը լրացնում են միջանկյալ ժայռերը, այնպես որ ստացվել է անընդմեջ մի պարիսպ: Մի ժայռի հիմքում կա բնական ջրամբար՝ առատ խմելու ջրով: Սրա մեջ ևս ձկներ տեսա, որ գյուղացիների պատմածով բազում տարիներ ապրում են: Բերդի մեջ կա Ասաղածածնի եկեղեցի, բերդի արևելյան կողմում՝ մի Թաղակապ շինություն, որն այժմ օգտագործվում է որպես զոմ, իսկ արևմտյան մասում է գտնվում դարբասը: Դարբասի աջից ու ձախից երկար տարածության վրա ձգվում է հսկայական քարեբլուժ հին շարվածքով:

Խ. Սկուրասը հողվածի 381—382-րդ էջերում տալիս է հարցի վերաբերյալ մանրամասն գրականության ցուցակ՝ 28 անուն աշխատություններ, ինչպես և բերդի երկու լուսանկար (№ 87 և 88):

Ἡλία Π. Βουτιερῖδου, Ἱμερολόγιον τοῦ ταγματος των ἐπιτεχτων Κρητιων ('Ο αἰών της Κρήτης κατὰ τὸ 1897 ἐν ταῖς ἀνατολικαῖς ἐπαρχίαις), Ἐν Ἀθῆναις, 1898.

Լիլիա Պ. Վուտիերիդիս, Հնարյալ կրետացիների գնդի օրագիրը: Կրետեի 1897 թ. ապստամբությունը (կղզու) արևելյան գավառներում, Աթենք, 1898:

1897 թ. Կրետեի հույն բնակչությունը ապստամբություն բարձրացրեց Թուրք բռնակալների դեմ: Վերահիշյալ գիրքը գրված է գեպերին մասնակից ու ակախառես, գեռես Թարմ տպավորությունների տակ գտնվող հեղինակի կողմից: Աշխատության երրորդ գլուխը նվիրված է 1897 թ. փետրվարի 24-ին Կրետեի արևելյան շրջանում գտնվող Մալեվիդիոն վայրում տեղի ունեցած արյունալի մարտերի նկարագրությանը: Այստեղ հույների կողմում պայքարին մասնակցություն ցուցաբերեցին նաև հայերը: Այդ մասին Վուտիերիդիսը գրում է. «Մարտերից մեկում քաջության հրաշքներ գործեցին նաև երկու հայ կամավորներ՝ Սիմոն Բերեմիասը (Երեմյա՜ն, Երամյա՜ն—2. Բ.) և նրա հորեղբորդի Խարալամբոս Բերեմիասը, որոնց ընտանիքները հայկական կառնառանների ժամանակ գլխավորն ունեցանք: Երբ ճգնաժամային մի պահում, երբ համալրում ստացած թշնամին ալեյի ուժգին հարձակվեց մերոնց վրա, ոտքից վիրավորվում է երիտասարդուսանող Անտ. Սաղլյաննակիրը և ի վիճակի չլինելով նահանջել, պիտի թշնամիների ձեռքն ընկներ: Ահա այդ ժամանակ Սիմոն Բերեմիասը նետվեց առաջ և գեղակների տարափի մեջ վերցնելով՝ վիրավորին և ժամանակ առ ժամանակ իր մարմինը որպես վահան պահելով վիրավորի առաջ. շատ դիպուկ կրակելով առաջ շարժվող Թուրքերի վրա, կարողացավ նրան կրակագծից դուրս բերել» (էջ 75—76):

Παῦλος Χιδίρογλου, Κατάλογος τῶν ἐν τῷ 'Αρχεῖφ τοῦ Κέντρου 'Επιστημονικῶν Ἑρευνῶν ἐναποκειμένων Ὁθωμανικῶν χειρογράφων. Ἑπετηρὶς τοῦ Κέντρου Ἑπιστημονικῶν Ἑρευνῶν, τόμος 5-ος, Λευκωσία, 1971-1972, ἀελ. 257-385.

Պավլոս Խիդիրոօղլու, Ցուցակ Գիտական Հետազոտությունների Կենտրոնի դիվանում պահվող Օսմանյան ձեռագրերի: ՔԳիտական Հետազոտությունների Կենտրոնի Տարեգիրք, հտ. 5-րդ, Նիկոսիա, 1971—1972, էջ 257—385:

Ութ էջից բաղկացած № 226 անթվակիր փաստաթուղթը հրատարակչի ենթադրյալ մեր Կիպրոս կղզու Թուրքական տիրապետության վերջին շրջանին (մինչև 1878 թ.) վերաբերող հայկական կամ մարոնիտ ծագմամբ մի զեկուցագիր է: Փաստաթղթի շորս էջերի վրա միայն բերված

են վիճակագրական տեղեկություններ՝ Կիպրոսի մահճակալներին, քրիստոնյաների (իմա՝ հույներին), հայերի և մարոնիտների մասին, որտեղ կղզու հայ բնակիչների թիվը նշված է 20.070—23.000, իսկ բոլոր ազգությունների աշխատող բնակչության ընդհանուր թիվը՝ 200.000 հոգի (էջ 324)։

Andre Guillou, La Theotokos de Hagia-Agate (Oppido) (1050—1064/1035), Citta del Vaticano, 1972.

Բուրգանդացի Անգրե Գիլլուն հրատարակել է Իտալիայի Օպպիդո շրջանի եպիսկոպոսության փաստաթղթերը՝ 14-րդ փաստաթուղթը գրված է աշխարհի արարչագործության 6561 (մ. թ. 1852—1053) թ. և իրենից ներկայացնում է նվիրատվության վկայական։ Այնտեղ գրված է հետևյալը. «+ Ես, նիկուլայոս Մակելարիսը, որ իմ ձեռքով գրողների պատվական խաչի նշանը, ուփափան կամքով արբանդադույն Աստվածածնին անվերադարձ նվիրարկում եմ այգին... կոշկակար Գևորգ հայից» (էջ 32)։

Վերահիշյալ գրության մեջ բազմակետերի տեղում փաստաթուղթը եղծված է և պիտի ենթադրել, որ հիշյալ այգին նիկուլայոս Մակելարիսը ժամանակին գնել էր այդ հայ կոշկակարից։ Այգին նվիրարկվել է Օպպիդոյի սբ. Աստվածածնի վանքին։ Փաստաթղթի արժեքը կայանում է նրանում, որ արձանագրված է հայ կոշկակարի գոյության մասին՝ XI դ. առաջին կեսին Իտալիայի Օպպիդո քաղաքում։ Ժիշտ է, մեկ հայը (կամ ավելի ճիշտ՝ մեկ հայ ընտանիքը) գեոևս չի կտրող վկայել Իտալիայի այդ շրջանում հայկական համայնքի գոյության մասին, բայց և բացառված չէ, որ այդ հայ կոշկակարի ընտանիքը միակը չէր այդ տեղերում։

Λ. Α. Παλ. η, Φινλετικὸς μεταναστεύσεις στὴ Βαλκάνια καὶ ὁπωγὰς τοῦ Ἑλληνο-σμοῦ (1912-1924), Δελτίο τοῦ Κέντρου Μικρασιατικῶν Σπουδῶν, τόμος 1-ος, Ἀθήνα, 1977, σελ. 75-87.

Ա. Ա. Պալի, Տարբեր ազգությունների գաղթեցումները Բալկաններ և հույների հալածանքները (Թուրքիայում) (1912—1924)։ «Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի Տեղեկագիր», հտ. 1-ին, Աթենք, 1977, էջ 75—87։

Հեղինակը տալիս է պաշտոնական տվյալներ՝ առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայից Հունաստան գաղթած հույների և այլ ազգությունների մասին։ Հունաստան գաղթեցին 1.221.849 հույն։ Առանձին վերնագրով նա տալիս է թվական տվյալներ՝ Հունաստան գաղթած հայերի վերաբերյալ։ Նա գրում է. «Զմյուռնիայից և Արևմտյան Փոքր Ասիայից Հունաստան գաղթեցին շուրջ 32.000 հայեր։ Նրանք ստացան Նանսենյան կոչված անձնագրեր, իսկ նրանց 22-ից ցած տարիքի անձանց 1927 թ. օրենքով տրվեց հունական քաղաքացիություն։ Այս հայերից 1931—1933 թթ. ընթացքում Սովետական Հայաստան հայրենադարձվեցին 6.589 հայր (էջ 79)։

Σπυρ. Π. Αάμπροϋ, Σόμματα. Διάταξις περὶ γαμικῶν τελῶν Ἑλληνων καὶ Ἀρμενίων ἐν Κωνσταντινουπόλει. Νέοι Ἑλληνοαρμένιοι, τόμος ΙΟ-ος, τεύχος Α'-Β', Ἀθήναι, 1913, σελ. 493-494.

Սպիր. Պ. Լամպրոս, Կարգադրություն Կոստանդնուպոլսի հույների և հայերի ամուսնական տուրքերի մասին։ «Նեոս էլլինոմնիմոն» հանդես, հտ. 10-րդ, պրակ Ա—Բ, Աթենք, 1913, էջ 493—494։

Հեղինակը տալիս է հիշրեթի 1209 (1831) թ. ենիարների աղասի Մուստաֆա Կազրիի ստորագրությամբ հրապարակված և Կոստանդնուպոլսի ու նրա շրջակայքի հույների ու հայերի ամուսնական տուրքերին վերաբերող թուրքերեն մի փաստաթղթի հունարեն թարգմանությունը։ Այնտեղ գրված է. «Հետոց հաստատված կարգ գոյություն ունի, համաձայն որի Կոստանդնուպոլսի»

սում և շրջակայքում բնակվող հույների և հայերի ամուսնության կամ նշանադրության թույլատրությունները նրանց տալիս է ենիշարներին ղեղի կոլեքտիվիզացիայի շնորհիվ դրանով սահմանափակվելով, Այդ առթիվ, ըստ գոյություն ունեցող վաղեմի սովորության, հոգուտ սահմանափակվելով, աղջիկներից գանձվում է տասը դուռուշ, հանդեսի արարողության պաշտոնյաների՝ նորեկների և յասաքըլի համար շորս դուռուշ, քուլուկշորաշի համար, որի իրավասության սահմաններում է կատարվում ամուսնությունը՝ երեք դուռուշ, իլիմդարի համար՝ երեսուն փարա, պահակի (նորեկի) համար վաթսուն փարա, աշ-բաշի, սու-բաշի և գընդան-խաղեմասըի համար յորս և մեկ քառորդ դուռուշ, գիշերապահի շոխադարի (գեշե-սալմասը) համար հարյուր փարա, սուլթան Մեհմետ Ֆաթիհի սրբազան մզկիթի վակուֆների արուշեհ-մուլթեղի համար երեսուն փարա, ընդամենը՝ 26 և երեք քառորդ դուռուշ:

Գոյություն ունի թուրք կրող կայսերական ֆերման, որի համաձայն պետք է գանձվի միայն վերոհիշյալ տուրքերը և ոչ ոք չանհանգստացնի նրանց ավելին պահանջելով: Այդ ֆերմանը գտնվում է հույների և հայերի ձեռքում:

Ելնելով վերոհիշյալից, համաձայն ֆերմանի և ի սկզբանե հաստատված կարգի, հույների և հայերի ամուսնության կամ նշանադրության դեպքում պետք է գանձվեն՝ աղջիկներից վերոհիշյալ տուրքերը և ոչ ոքի չանհանգստացնեն դրանից ավելին պահանջելով: Ոչ ոք չպետք է գործի հակառակ ֆերմանի: Եթե որևէ մեկը խախտի ֆերմանը, նրան դատի տան ու պատժեն:

Սույն փաստաթուղթը կազմվեց և կնքվելով հանձնվեց նրանց (հույներին և հայերին— Ղ. Բ.), որպեսզի անհրաժեշտության դեպքում ներկայացվի և ընդունվի որպես հիմք: Կազմվեց 1209 թ. շեմադի-լ-ևվիլ ամսի սկզբին:

Կնիք

Մուստաֆա Կադրի
ենիշերինների ազասի

Το Οικουμενικὸν Πατριαρχεῖον καὶ ἡ Ἀρμενικὴ Ἐκκλησία. „Γρηγόριος ὁ Παλαμάς, Ἐκκλησιαστικὸν περιούσιον, ἐν Θεσσαλονίκῃ, 1919, ἔτος Γ', τεύχος ΜΓ', σελ. 498.

Տիեզերական Պատրիարքարանը և Հայկական եկեղեցին: Ֆրիգորիոս Պալամաս, «Եկեղեցական պարբերաթերթ», Սալոնիկ, 1919, 9 տարի, 43-րդ պրակ, էջ 498:

Կոստանդնուպոլսի եկեղեցու Սինոդը Տիեզերական եկեղեցու թեմերի հոգևոր պետերին է ուղարկել հետևյալ շրջաբերականը:

«Սրբազնագույն և աստվածընտիր (այսինչ) մետրոպոլիտ, մեր՝ ի Քրիստոս Աստված սիրելի (այսինչ) եղբայր Տեր, Լղբայրաբար ողջունում ենք ի Տեր Ձեր սրբազնագունությունը: Հայոց սրբազնագույն Պատրիարք Տեր Զավենը նամակով դիմեց մեզ և խնդրեց, որպեսզի այն վայրերում, որտեղ չկան հայ քահանաներ, այդ վայրերի հայերին թույլ տրվի իրենց պաշտամունքային արարողությունները, ինչպես ամուսնության խորհուրդը ժամանակավորապես կատարեն ուղղափառ (իմա հույն— Ղ. Բ.) քահանաները, որպեսզի այդ արարողությունները չձգձգվեն: Սուրբ Սինոդը, նկատի ունենալով նման պայմաններում եկեղեցու դիրքը, որոշեց, որ յուրաքանչյուր վայրի ուղղափառ կղերն անհրաժեշտության դեպքում կարող է հոգալ հայոց հոգևոր պետքերին և ըստ մեր կարգի կատարել հոգևոր պաշտոնը, այն դեպքում, երբ հայերը չունենալով սեփական քահանաներ մեր եկեղեցուն են դիմում:

Ահա այդ առթիվ հայտնվում է այս սինոդական որոշումը ի գիտություն այս սրբազան մետրոպոլիտության և ի գործադրումն: Բող նրա (իմա մետրոպոլիտության—Ղ. Բ.) տարիները լինեն երկար և փրկարար:

1919 թ. մայիսի 29-ին

Տիեզերական Աթոռի տեղապահ
Կեսարիայի մետրոպոլիտ Նիկոլայոս

Ց Հասկանալի է, հայկական կոտորածների ժամանակ հայկական կղերի ոչնչացման հետևանքով: